



ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Լիլիթ Մկրտչյան

ՀՐԵ ԵՐԿՐԻ ՀԵՐՈՍԸ

Կարապետ Բարսեղյանը ընդամենը 18 տարեկան էր, երբ հրամանատարը նրա կրծքին ամրացրեց «Կարմիր դրոշի» շքանշանը և ասաց.«Ապրե՛ս, որդի՛ս, միշտ այդպես դիպուկ հարվածիր ֆաշիստներին... »: Գեներալ-մայոր Կոնստանտին Լեսելիձեի քաջալերանքից ամոթիաձ՝ գնդացրորդը երդվեց կռվել մինչև վերջին շունչը և, եթե հարկ լինի, կյանքը չխնայել հանուն հայրենիքի...

Կարապետը կառավարական բարձր պարգևը ստանալուն պես կրկին մեկնեց նոր մարտական առաջադրանք կատարելու:

Նովոռոսիյսկից արևմուտք ընկած փոքրիկ հենակետը, որ խորհրդային դեսանտայինները նվաճել էին մեծ զոհերի գնով, բզկտվել էր արկերի ու ռումբերի պայթյունից: Չկարմի թիզ հող, որ արյունով ներկված չլիներ: Թաման թերակղզու, Նովոռոսիյսկ քաղաքի, ամբողջ Ղրիմի ազատագրության ռազմավարական հանգույցն այդտեղ էր՝ ծովային հետևակայինների ձեռք բերած «Մալայա զեմլյա» հենակետում: Իսկական մահու կենաց կռիվ էր մղվում: Դեսանտայինների առջևում մինչև ատամները զինված ֆաշիստներն էին, իսկ ետևում՝ ծովը: Բայց ծովայինները ցերեկը կարծես անհետանում էին գետնի երեսից, իսկ գիշերը հայտնվում հրաշքով ու դիտապաստ անում թշնամուն: Վեց մետր խորությամբ փորված բլինդաժները, կրակակետերը վերևից քայքայվում էին, հողմացրիվ դառնում, բայց ներքին շերտերը հուսալիորեն պաշտպանում էին խիզախներին:

Ամեն անգամ հրետանու և ավիացիայի կատաղի ռմբակոծությունից հետո դեսանտայինների վրա սկսում էին հարձակվել թշնամու տանկերն ու հետևակը: Դեսանտայինները թրթուրավոր մեքենաներին դիտավորյալ թողնում էին անցնել իրենց մարտակարգերի խորքը և անխնա ոչնչացնում էին հետևակը: «Կարմիր դրոշի» շքանշանակիր, կիրովականցի (վանաձորցի) 18-ամյա պատանու «Մաքսիմ» գնդացիրը այդ պահերին ուղղակի հրաշքներ էր գործում: Նրա կրակակետի մատույցներում միշտ դիակների կույտ էր գոյանում: Միմյանց ետևից դատարկվում էին փամփուշտաժապավենները և նոսրանում ֆաշիստների շարքերը: Ծովայինների թիկունքը մխրճված տանկերը բոցավառվում էին նռնակների պայթյունից: Բայց մի անգամ հայ քաջորդու կրակակետի վրա պայթում են ուղիղ նշանառությամբ արձակված հրետանային մի շարք արկեր: Թշնամուն գետնին գամող գնդացիրը լռում է: Միայն ուշ գիշերին ծովայիններին հաջողվում է առաջավոր կրակագծից դուրս բերել վիրավոր ու արյունաքամ գնդացրորդին, որի մարտական հաշվում այդ օրը գրանցված էր ֆաշիստական 50 սպանված զինվոր սպա:



«Ուշքի եկա ահավոր դրոշյունից: Փորիս վիրակապերը ներկված էին արյունով: Ինչ էր կատարվում, չէի ըմբռնում: Աջ ու ձախ ականներ էին պայթում, սուլում անհամար գնդակներ: Մոտս մի քանի վիրավորներ էին, որոնց տնքոցը խլանում էր որոտի ու աղմուկի մեջ:

Ջենք կրելու ունակ բոլոր վիրավորները, ըստ երևույթին, ետ էին շարտում ֆաշիստների հերթական կատաղի գրոհը: Հանկարծ դաշտային բուժկայանի մատույցներում երևացին գերմանական մի քանի սաղավարտավորներ: Հաղթահարելով ցավը՝ ավտոմատային կրակահերթով նրանց գամեցինք գետնին, մինչև մեզ օգնություն եկավ», – պատմում էր Կարապետ Բարսեղյանը և նյարդայնորեն շոյում ճեփ–ճերմակ քունքերը: Հուզվում է:

Ծանր է նորից վերապրել անցածը: Նա նույնիսկ չի պատկերացնում, թե ինչպես է կենդանի մնացել: Ֆաշիստները «Մալայա զեմլայի» յուրաքանչյուր քառակուսի մետրի վրա ամեն գրոհից առաջ արձակում էին չորս արկ ու ական և հետո միայն գործի դնում մյուս հրազենային միջոցները: Իսկ օրվա ընթացքում պատահում էր, որ խորհրդային ծովայինները ետ էին մղում այդպիսի 8 գրոհ: 225 օր հայ գնդացրորդը նման պայմաններում է մարտնչել հայրենիքի ազատագրության համար Լպատանեկան հասակից հրաժեշտ տվել մազերի սևությանը: Բայց նա առույգ ու կենսախիռն է, ինչպես երիտասարդական տարիներին: Ներկայումս ղեկավարում է Կիրովականի Սյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կապիտալ շինարարության բաժինը, իսկ մինչ այդ զբաղեցրել է տարբեր պատասխանատու պաշտոններ:

«Հայերս շատ էինք «Մալայա զեմլայում», – պատմում է Կարապետը, – բայց թե ովքերոջ մնացին հազարներից, դժվար է ասել: Մի անգամ Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) ծանոթացա Կովկասյան ռազմաճակատում մարտնչած մի փոխգնդապետի հետ, որը ծառայել էր մեր՝ 18–րդ բանակում: Երբ պատմեցի, որ հենց 1943 թվականի փետրվարի սկզբներից ափ եմ իջել Թաման թերակղզում մեր նվաճած հենակետը և կռվել մինչև Նովոռոսիյսկ քաղաքի ազատագրության օրը, նա մի տեսակ թերահավատությամբ սկսեց ունկնդրել ինձ:

– Շատ հաճելի է, որ դուք ողջ եք մնացել, – ասաց փոխգնդապետը, բայց քիչ է հավանական, որ այդ հրե երկրում 225 օր դիմացել եք: Ես շատ ընկերներ և զինակիցներ ունեի, որոնք իրենց գլուխը վայր դրեցին այդ փոքրիկ հողակտորում: Որքան ուժեր էինք ուղարկում ձեզ օգնության, բայց չնչին մասն էր տեղ հասնում: Ֆաշիստական գիշանգղերն իրենց հսկողության տակ էին պահում երկինքը, ծովի խորքերում անարգել գործում էին սուզանավերը: Գեղենջիկ քաղաքից բազմիցս առիթ է եղել դիտել «Մալայա զեմլան»: Դուք դա չեք տեսել: Աննկարագրելի տեսարան էր: Օր ու գիշեր «Մալայա զեմլան» բոցերի մեջ էր, վառողի ծխի ամպերով ծածկված: Սրտի ահավոր կսկիծով ու անթարգմանելի վշտով դիտումն արտասվում էինք կրակի ու բոցերի ճիրաններում մարտնչողների դ համար: Այսօր էլ մտածում եմ, ինչպե՞ս դիմացաք, ինչպե՞ս հաղթեցիք: Իմ կարծիքով՝ Մեծ հայրենականի տարիներին ոչ մի տարածք, ոչ մի հողակտոր այնքան անխնա չի ռմբակոծվել, բզկտվել ու հրկիզվել, որքան «Մալայա զեմլան»»:

Կարապետը գրեթե անփոփոխ վերհիշեց փոխգնդապետի պատմածը և ավելացրեց. «Իսկապես ծանր էր մեր վիճակը, բայց մեր զինվորներն անօրինակ սխրանքներ էին գործում: Մահը նրանց համար սարսափելի չէր: Հրո ճարակ դարձած քաղաքների ու գյուղերի, միլիոնավոր անմեղ զոհերի



վրեժխնդրությամբ լցված նետվում էինք բոցերի մեջ, թաքուն սողոսկում թշնամու դիրքերը, ներթափանցում թիկունքը և անընդհատ կրակի տակ պահում նրան, որպեսզի չկարողանա գլուխ բարձրացնել, ուշքի գալ: Շատ զոհեր եղան, բայց հենակետը ոչ միայն կարողացանք պահել, այլև այդտեղից մեծ հարձակում կազմակերպեցինք Նովոռոսիյսկի վրա և ազատագրեցինք այն: Ծովափնյա այդ քաղաքը թշնամու հռչակավոր «կապույտ գիծ» կոչվող ռազմավարական հանգույցի բանալին էր, որ փակ էր պահում Ղրիմի դռները և, ուզած պահին, բացում դեպի Կովկաս տանող դարպասները:

ՄՐՐԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՎ

Ռազմաճակատային հուշերը միշտ էլ անբաժան են վաստակաշատ պղնձագործ Յուլակ Մարտիրոսյանից: Պատերազմի առաջին օրերից մինչև վերջին պահը նա մարտնչել է հայրենիքի ազատագրության համար՝ Կովկասի նախալեռներից հասնելով մինչև Բեռլին:

– Պատահում էր, – ասում է նա, – խոնավ խրամատում նստած՝ մեկ էլ աչքերիս առջև հառնում էր մեր Ալավերդին, կոմբինատը, այս ձուլարանը: Ու մտածում էի՝ տեսնես երբևէ բախտ կունենա՞մ, երկաթաձողը ձեռքիս, նորից հնոցի մոտ հերթապահելու:

Ինչպես տեսնում եք, արժանացա դրան և այժմ էլ ողջ–առողջ եմ:

Հիսունվեց գարուններ է բոլորել Յուլակը: Նա շարքային ձուլողից բարձրացել է մինչև ձեռնարկության խոշորագույն արտադրամասի պետի տեղակալի պաշտոնին: 1941-ի ամռանը Յուլակը ձուլման վառարանի կողքից էլ մեկնեց ճակատ՝ պաշտպանիչ դիմակը փոխարինելով զինվորական սաղավարտով: Այն ժամանակ 28–ամյա երիտասարդն իր ետևում ուներ տասներկու տարվա աշխատանքային կենսագրություն: Իսկ այսօր նրա կուրծքը զարդարված է մարտական Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Դրանցից ամեն մեկը նախկին քաղղեկի կատարած խիզախումների ու քաջագործությունների գնահատականն է:

Կառավարական առաջին բարձր պարգևին Յուլակն արժանացել է Կերչի ազատագրության համար մղված մարտերում, իսկ երկրորդը՝ Ստալինգրադի երկաթուղային կայարանի գրավման ժամանակ՝ անձնական քաջագործության համար:

«Ճակատային ընդհանուր գիծ, ինչպես մեծ մասամբ լինում էր, Ստալինգրադում չկար, – պատմում է նա: Այնտեղ արյունահեղ մարտեր էին մղվում ամեն մի փողոցի, շենքի, հաճախ նաև ամեն մի հարկի ու սենյակի համար: Այդպես էր դրությունը նաև քաղաքի երկաթուղային կայարանը նվաճելիս: Այն չորս անգամ ձեռքից–ձեռք անցավ: Ես կործանիչ հրետանային մարտկոցի քաղղեկն էի: Հրամայված էր ամեն գնով դուրս շարտել ֆաշիստներին շենքից և ամրանալ այնտեղ:

Մոտենում էր ձմեռային լուսաբացը: Յուրտ էր, սառնամանիք: Մեկ էլ անսպասելի «խոսեցին» գնդացիները: Թշնամին կռահել էր մեր մտադրությունը: Հետախուզական կրակով ջանում էր բացահայտել մեր կրակակետերը: Բայց մենք լռեցինք: Անցան ժամեր թվացող մի քանի ժամեր և իրենց տեղը մատնած թշնամական գնդացիները ստացան պատասխանը: Թնդանոթների դիպուկ կրակոցով



նրանցից երկուսը հենց առաջին համազարկով շարքից դուրս եկան: Մյուսները հասցրել էին փոխել դիրքերը: Օգտվելով նպաստավոր դրությունից՝ մի խումբ խիզախ ռազմիկներ փորսող տալով մոտեցան շենքին և նոնակների կապոցները շարտեցին նկուղային հարկի պատուհաններից ներս: Ահեղ պայթյուններից գոյացած ծխի ու ամպի փոշու մեջ դժվար էր որևէ բան նշմարել: Եվ ահա ձեղնահարկից կրկին կարկտահարեցին թշնամու գնդացիները: Թնդանոթներն իրենց կրակն ուղղեցին նրանց վրա: Նկուղային հարկն արդեն մերն էր, բայց վերև առաջանալը խիստ վտանգավոր էր և գրեթե անհնարին: Ավտոմատավորները դիտապաստ էին անում մեր զինվորներին: Կապավորի միջոցով նրանց կարգադրվեց գրավել թշնամու փախուստի բոլոր հնարավոր ելքերը և սպասել հետագա հրամանի:

Այդ օրը քաղաքի արևմտյան մասի բոլոր փողոցներում կատաղի մարտեր էին գնում: Վճռված էր վերջնականապես ծնկի բերել ֆելդմարշալ ֆոն Պաուլյուսի բանակը և գերել նրան: Սովետական ստորաբաժանումների ոտքի տակի հողը գնալով ընդլայնվում էր, իսկ թշնամունը՝ ընդհակառակը: Ամեն մի շենք, ուր նրանք նստած էին դեռ, դառնալու էր նրանց գերեզմանը: Այսպես եղավ նաև կայարանի հետ: Չորս կողմից շրջապատեցինք և պահեցինք հրանոթային անընդմեջ կրակի տակ: Հուսահատ ֆաշիստները գաղտնի ճանապարհներով ճգնում էին մազապուրծ լինել, բայց բոլոր անցուղիները մեր ձեռքում էին: Ոչոքի չհաջողվեց փախչել: Թշնամուց մաքրելով փլատակների այդ կույտը՝ արագ շարժվեցինք դեպի կենտրոնական հանրախանութի շենքը: Այնտեղ տեղավորված էր Պաուլյուսի շտաբը, որն արդեն անձնատուր էր լինում: Ֆաշիստները, սպիտակ թաշկինակները վեր պարզած, հազարներով գերի էին հանձնվում: Դիմադրելն անօգուտ էր: 300-հազարանոց գերմանական բանակը կաթսայի մեջ էր և պիրկ օղակը ճեղքելու նրա բոլոր ճիգերը ձախողվեցին: Ազատագրվեց հերոս Ստալինգրադը: Սովետական փառապանծ բանակի հաղթական երթը այլևս դժվար էր կանգնեցնել:

Ստալինգրադն իսկապես շրջադարձ էր Հայրենական մեծ պատերազմում: Ֆաշիստական գլխավոր հրամանատարությունն ամբողջ երկրում սուզ հայտարարեց խայտառակ պարտության համար: Մյուս կործանիչ հարվածն օկուպանտները ստացան Օրյոլ-Կուրսկի աղեղում: Պատմության մեջ մինչև այժմ տանկային ամենախոշոր ճակատամարտը շահեցին սովետական մարտիկները: Ապա նրանց կործանիչ հարվածները ճեղքեցին նաև հեղափոխության օրրանի՝ Լենինի քաղաքի շրջափակումը: Յուլակ Մարտիրոսյանը հերոս քաղաքը ազատագրողների շարքում էր: Այնուհետև՝ Մերձբալթիկայում, ուր մահ ու կենաց կռիվ էր մղվում եղբայրական ժողովուրդներին ստրկացումից փրկելու համար, նա ղեկավարում էր կործանիչ հրանոթների ստորաբաժանումը: Այն գտնվում էր ռազմաճակատի գլխավոր հրամանատարի ռեզերվում: Հարկ եղած դեպքում այն արագ փոխադրվում էր տեղից տեղ, ուր հակառակորդի տանկերը փորձում էին ճեղքել պաշտպանական գիծը:

Ռիզայից քիչ հեռու Ասցե անունով փոքրիկ քաղաք կա, - շարունակում է պատմությունը Յուլակը: - Մենք այն գրավեցինք մեծ զոհերի գնով, բայց թշնամին չէր ուզում զիջել: Վեց անգամ հակազրոհի եկավ և հսկայական կորուստներով ետ նահանջեց: Յոթերորդ անգամ, օժանդակ ուժեր ստանալով, շրջանցեց թևերից, և շրջապատման վտանգ ստեղծվեց: Հրամայվեց պայթեցնել հրանոթները և նահանջել: Մի քանի մարդ էինք մնացել: «Ֆերդինանդ» տանկերը, վիշապների նման ոռնալով, մոտենում էին մեր դիրքերին: Դրանք ոչնչացնելու համար նման հարմար վիճակ երբեք չէր ստեղծվել: Խփում էինք ուղիղ



նշանատությամբ: Բոցավառվեցին երեք տանկեր, և հանկարծ մեր թիկունքից որոտաց «Կատյուշան»: Թշնամին նահանջեց: Այդ մարտի բոլոր մասնակիցներն արժանացան բարձր պարգևի: Իսկ ինձ ներկայացրին Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանի»:

Ցուլակ Մարտիրոսյանի ճակատային «երթուղին» հասնում է մի քանի հազար կիլոմետրի: Չնայած բազմաթիվ անգամներ նա վիրավորվել է, բայց ապաքինվելուց հետո միշտ վերադարձել է իր ստորաբաժանումը: Մարտերով նա անցել է ամբողջ Մերձբալթիկան, կովել Կրակով, Կոտովցի քաղաքների, չեխոսլովակյան բնակավայրերի ազատագրության համար: 1946–ին հայրենիքի ազատագրության մարտերում իրեն փառքով պսակած հայ քաջորդին արդեն նորից հարազատ կոմբինատում էր, ձուլման վառարանի կողքին: Նա բազմաթիվ պաշտոններ է վարել ձեռնարկությունում: Ղեկավարել է արհմիութենական և ապա կուսակցական կազմակերպությունները, եղել է դիրեկտորի տեղակալ, նորից գնացել արտադրություն: Նրա ղեկավարած արտադրամասում է այժմ աշխատում նաև որդին՝ Յուրան: Համբավվոր ձուլող է, հոր արժանի աշակերտը:

Հայր և որդի միշտ միասին են գալիս աշխատանքի, բայց հաճախ տուն են վերադառնում առանձին–առանձին: Հերթափոխությունից հետո էլ արտադրամասի պետի տեղակալի համար լուծելու հարցեր են լինում, էլ չենք ասում հանդիպումների, ելույթների մասին, որոնք հատկապես այս օրերին շատ–շատ են...

ԻՄ ԿՅԱՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

«Իմ կյանքը պատկանում է սովետական հայրենիքին... Հայաստանին... Խոստանում եմ Ձեզ, թանկագին Միխայիլ Իվանովիչ, գերմանական զավթիկներին ոչնչացնել մինչև լիակատար հաղթանակը, ոչնչացնել նրանց մինչև այն ժամանակ, քանի դեռ բաբախում է սիրտս: Երդվում եմ, որ մինչև վերջ կկատարեմ իմ զինվորական պարտք...»:

Երեսունմեկ տարի առաջ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը Կրեմլում կառավարական բարձր պարգև՝ Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ հանձնեց հայ ժողովրդի քաջարի զավակ Սամսոն Մկրտումյանին:

Լեռնաշխարհի ծնունդ էր Սամսոնը, իր հայրենի Սյունյաց լեռների պես ըմբոստ ու հպարտ: Միրում էր կապույտ երկինքը և գիշերվա խավարում առկայծող աստղերը: Երագում էր սլանալ միշտ դեպի վեր, շոշափել ամպերը, զգվել լուսատուներին, սավառնել, ինչպես անվախ արծիվ... Գնաց երազած ճանապարհով, դարձավ օդաչու: Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, նա արդեն խորհրդաֆիննական պատերազմում անվեհեր բազեի համբավ վաստակած էսկադրիլայի հրամանատարի տեղակալ էր:

Շուտով Սամսոնը փոխարինում է մարտում զոհված հրամանատարին: Արևմտյան ռազմաճակատում կատարած սխրագործությունների համար խիզախ օդաչուն արժանանում է հրամանատարության ուշադրությանը:

Կատաղի մարտեր էին մղվում Կովկասյան նախալեռներում, թշնամին անընդմեջ գրոհում էր Օրջոնիկիձեն (այժմ՝ Վլադիկավկազ) և նրա շրջակա բնակավայրերը նվաճելու համար. հարկավոր էին



լեռնականներ, որոնք գիտեին լեռների խորհուրդը: Եվ կազմվեց կովկասցիների էսկադրիլիան, որի հրամանատարությունը հանձնվեց հայ ժողովրդի քաջարի զավակին:

Մարտական առաջադրանքը կատարելուց հետո լեռնականների ութնյակը վերադառնում է օդանավակայան, բայց Գրոզնի քաղաքի մատույցներում հայտնվում են մի խումբ «Յունկերսներ»: Մարտն անխուսափելի է, իսկ վառելիքը՝ սպառվելու վրա: Բազեները սպասում են կապիտանի վճռին: «Անցնել ճակատային գրոհի», – լսվում է հրամանատարի ձայնը, և ութնյակը մոլեգնաբար սլանում է դեպի թշնամին: Անսպասելի հարձակումից հակառակորդները փախուստի են դիմում՝ հետևում թողնելով երկու բոցավառվող ինքնաթիռ: Սակայն քիչ անց հայտնվում են ևս մի քանի «Յունկերսներ»: Դարձյալ անխուսափելի մարտ ու հաղթանակ: Ութնյակը բարեհաջող վերադառնում է օդանավակայան:

...Օրջոնիկիձեի շրջանի Գիզել գյուղի համար գերմանական ֆաշիստները համառ ու կատաղի մարտեր էին մղում: Անընդհատ համարելով ուժերը՝ նրանք կարողանում են ճակատային հարվածով ձեռքել խորհրդային զորքերի պաշտպանությունը: Հարկավոր էր ամեն գնով կասեցնել թշնամու հետագա առաջխաղացումը:

Ցամաքային ստորաբաժանումների հետ հերոսական պայքար էր մղում նաև ավիացիան: 805–րդ գրոհային ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար Սամսոն Մկրտումյանն իր ութնյակով դարձյալ օդում է:

Նոյեմբերի 6–ն էր, աշնանային ցրտաշունչ մի օր, անձրև ու մառախուղ: Ութնյակը կտրում է ռազմաճակատի գիծն ու Կովկասյան լեռների վրայով ուղղություն վերցնում դեպի նպատակակետը: Ահա և թշնամին. տանկերի և ավտոմեքենաների երկար շարասյուն: Խորհրդային օդաչուներն այնքան անսպասելի են հարձակվում, որ ֆաշիստները նույնիսկ չեն հասցնում քողարկվել:

Ինչպես միշտ, այս անգամ ևս առջևից սլանում էր Մկրտումյանը՝ անձնական օրինակով ոգևորելով մարտական ընկերներին: Որոտում են գնդացիներն ու թնդանոթները, բայց շարասյան գլխին տեղում է ռումբերի տարափ: Բարձրություն վերցնելու պահին էսկադրիլիայի հրամանատարի ինքնաթիռն օղակում են թշնամու վեց կործանիչներ:

...Անհավասար մարտ: Դրանցից մեկն ընդհուպ մոտենում է հնգաթև աստղի տարբերանշան ունեցող ռաբակոծիչին: Լսվում է կարճ կրակահերթ, և ֆաշիստական մեքենան բոցավառվում է: Մյուսներն սկսում են ավելի կատաղիորեն գնդակոծել կապիտանի՝ արդեն մի քանի տեղից վնասված ինքնաթիռը: Գնդակների տեղատարափից փշրվում են օդաչուի խցիկի ապակիները: Անձնագոհ բազեն արդեն ունի վեց վերքեր՝ գլխից ու թիկունքից: Աջ թևն այլևս չի գործում: Թշնամին գրոհում է անընդմեջ: Բայց նա պաշտպանվում է, կռվում մոլեգնաբար: Վայրէջքի ոչ մի հնարավորություն. առջևում Կովկասյան ձյունագագաթ լեռներն են, ներքևում՝ ֆաշիստները...

1942 թ. նոյեմբերի 6–ն էր. հաղթանակ էր պետք կամ հերոսական մահ: Ուժերի գերբնական լարումով Մկրտումյանը շարունակում է մարտը: Վայր է գցում երկրորդ կործանիչը: Սակայն մյուսները հետապնդում են: Մեքենայի ընթացքը դանդաղում է, օդաչուն փակում է գազը: Արագընթաց հետապնդող կործանիչն իներցիայով նրանից առաջ է անցնում: Ճարճատում է ուժասպառ բազեի գնդացիորդ, և հակառակորդը գահավիժում է լեռներն ի վար:



...Նորից ուժերի գերլարում, և հոշոտված ուրբակոծիչը շարունակում է ընթացքը, բայց ո՞ւր գնալ: Այլևս ուժ չկա:

Լեռներ, լեռներ... Որքան է ձեզ մանկուց սիրել ու գգվել ձեր լանջերին խիզախ հայրողին: Նա նորից ապավինում է ձեզ...

Լեռնցու սրատես աչքը նշմարում է ձյունագագաթ լեռան լանջի տափարակը: Հանգչում են շարժիչները, և մեքենան քարի նման արագ սլանում է վար: Հետապնդողները, ամեն ինչ վերջացած համարելով, ետ են շրջվում: Բայց ոչ: Ահա բացվում են անիվները, և արծիվն ուղղվելով անհավատալի վայրէջք է կատարում լեռան լանջին: Գործադրելով վերջին ճիգերը՝ անձնագոհ կապիտանը հազիվ դուրս է սողում խցիկից և փարվում մայր հողին...

Հոսպիտալում, ծանր վիրահատությունից հետո, Սամսոնը բացում է աչքերը: Առաջադրանքը կատարված էր գերազանց, և հրամանատարությունը նրան ներկայացրել էր հերոսի կոչման:

Ուրախալի լուր էր, բայց բայց տխրեց օդաչուն, որովհետև այլևս իր մարտական ընկերների հետ չէր: Միայն Օրջոնիկիձեի շրջանում նա իր էսկադրիլիայով կատարեց 163 մարտական թռիչք, ոչնչացրեց թշնամու 86 տանկ, 116 ավտոմեքենա: պահեստներ, կենդանի ուժ և տեխնիկա:

Ապաքինվեց անվեհեր բազեն: Մոսկվայում համապատասխան դասընթացներ անցավ ու նշանակվեց ավիացիայի գրոհային գնդի հրամանատարի տեղակալ:

Նորից թեժ մարտեր: Ազատագրվում են Կրասնոդարը, Նովոռոսիյսկը, Չերկասկը, Խարկովը, Կիևը, Գոմելը... Բայց նա չապրեց մինչև հաղթանակը, հերոսի մահով ընկավ 219-րդ մարտական թռիչքը կատարելիս:

Վերջին անգամ հեռավոր վայրերից նա իր հայացքը հառեց դեպի Սյունիք, հայրենի Բոնակոթ, ուր հավերժ անմար է հերոսի հիշատակը...

ՈՒԿՐԱԻՆՈՒՅԻՆ ԾԱՂԻԿ Է ԴՆՈՒՄ ՀԱՅ ՀԵՐՈՍԻ ՇԻՐՄԱԹՄԲԻՆ

Նա գոհվել է, որ այսօր խաղաղ լինի մեր երկնակամարը, նա պայքարել է՝ հաղթանակի հավատը հոգում:

Անդրանիկ Հակոբի Մուրադյան...

Հիմա Ուկրաինայում գարուն է պայծառ, որբերել է ծաղիկներ անթիվ: Ու հիմա այնտեղ անձանոթ ուկրաինուհին ծաղիկներ է շող տալիս նրա գերեզմանաթմբին, երախտագիտությամբ հիշում, որ նա կռվել ու գոհվել է իր հայրենիքի համար:

Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կաբինետներից մեկը զբաղվում է Հայրենական պատերազմի հերոսներով: Այստեղ մենք թերթում ենք գործը, զգուշորեն, խնամքով վերցնում ենք խունացած թերթերը, որոնց պատմությունը սկսված է 1943 թվականից և ավարտված է... Բայց դեռ չի ավարտված: Այսպիսի պատմությունները չեն ավարտվում...

Աշխատանքային գրքույկում տեղեկանքներ են Երևանի Ձերժինսկու անվան գործարանի դիրեկցիայի կողմից տրված խրախուսանքների ու պարգևատրումների մասին:



Ու այս պայծառ պատմությունը, որ դեռ պիտի գրվեր ձերժինսկցու ազնիվ աշխատանքի մասին, ընդհատվում է, ինչպես շատերի հետ է պատահել 1941 թվականի հունիսի 22-ին:

Թերթում ենք:

Նամակները եկել են Ուկրաինայից, գրում է հոսպիտալից. «Բարև, սիրելի կին: Նամակ չեմ ստանում: Վիրավորված եմ, բայց ոչինչ, կառողջանամ: Իմ մասին մի մտածիր, անհամբեր սպասում եմ, թե երբ կհանդիպենք մենք: Արդեն երրորդ տարին է, ինչ գրված եմ քեզ տեսնելու հնարավորությունից: Կգա ժամանակ, երբ կհանդիպենք:

...Քաղցրը կյանքում ընտանեկան հարկն է, որն ինձ մոտ բացակայում է, որովհետև մարդակեր Հիտլերը մեր վզին է փաթաթվել: Բայց ոչինչ, հաղթանակը մերը կլինի, կյանքն իր նորմալ հունի մեջ կմտնի: Ամենքս կգնանք մեր տեղերը, որը կոլտնտեսություն, որը գործարան, իսկ ես, իհարկե, իմ գործարան»:

Սակայն մի պահ նամակներն ընդհատվում են, և վերջինը անձանոթ ձեռագրով է. «Ձեր ամուսինը՝ լեյտենանտ Անդրեյ Հակոբի Մուրադյանը, Հայրենական մեծ պատերազմի ճակատում անձնվիրություն և խիզախություն է ցուցաբերել: Անձնական օրինակով ոգևորել է իր ենթականերին, իսկական հերոսական գործեր կատարել, թշնամուն ջախջախել է այնպես, ինչպես հայ ժողովրդի մեծ զավակ, առասպելական Սասունցի Դավիթը: Նա՝ հայ ժողովրդի հերոս որդին և իսկական սովետական դյուցազունը, իր կյանքը չինայեց հայրենիքի ազատության համար և ընկավ հերոսի մահով: Ստորաբաժանման հրամանատար՝ փոխգնդապետ Պետրին»:

1943 թվական: Խոր աշուն: Ցուրտը, տափաստանային քամիներն անգոր էին կանգնեցնելու հայրենիքի համար արդար պայքարի ելած մարտիկներին, որոնք մեր հողից դուրս էին շարտում թշնամուն: Նրանց շարքերում էր և Մուրադյանը, որը հասել էր Դնեպրին:

Թերթում ենք ու կարդում ՏԱՍՄ-ի թղթակցինկարագրությունը. «Լեյտենանտ Մուրադյանի ստորաբաժանումը փոխադրող նավակները գնում էին երկրորդ էջելոնում: Առաջինն արդենիջել էր աջ ափին և գերմանացիների հետ կռվի բռնվել: Հիտլերականներն իրարանցման մեջ ընկան: Մթության մեջ դեպի անասող երկինքը միանգամից մի քանի հրթիռ սլացան, և Դնեպրի ջրային հարթության վրա թրթռացին լուսարձակի ճառագայթները:

Ափից սկսեցին կրակել գերմանական գնդացիները: Անախորժ վզոցով թռան-անցան ականները: Նավակների շուրջը եռում, փրփրում էր ջուրը: Առաջին նավակի ծայրին կանգնած էր ինքը՝ Անդրանիկ Մուրադյանը: Հրթիռների պայծառ բոցավառումների լույսով մարտիկները յուրաքանչյուր անգամ տեսնում էին առաջ թեքված նրա մարմնի մութ ուրվագիծը: Թվում էր, թե նա չի նկատում շուրջը մոլեգնող փոթորիկը և միայն շտապեցնում էր թիավարներին:

–Ո՛ւժ տվեք, եղբայրներ, ո՛ւժ տվեք թիերին:

Հրամանատարի կոփվածությունը և անվեհերությունը մարտիկներին էր հաղորդվում...

...Գերմանացիները հարվածին չդիմացան և սկսեցին շտապ նահանջել: Մինչև Լուսաբաց լեյտենանտ Մուրադյանի ստորաբաժանումն աջ ափին մի փոքր հենակետ գրավեց, բայց լեյտենանտը հիանալի հասկանում էր, թե ինչպես դժվար կլինի պահպանել այդ մի կտոր հողը: Թշնամին գնդացիների հրետանային և ականանետային կրակով փակեց Դնեպրով ձգված ուղին: Սովետական մի



խումբ մարտիկներ մենակ մնացին հակառակորդի խոշոր ուժերի դեմ: Սկսվեց մի անհավասար, արյունահեղ պայքար, որը տևեց մի քանի օր:

Գերմանացիները մի քանի անգամ ստորաբաժանումը սեղմեցին գետին: Ետևում ավազի գետեզրյա նեղ շերտն էր միայն և ջրառատ Դնեպրը:

Բայց Մուրադյանին յուրաքանչյուր անգամ հաջողվում էր վերականգնել անհուսալի թվացող դրությունը: Արդեն երեք օր նա այք չէր փակել, բայց սպայի՝ վառողի ծխից ու փոշուց սևացած դեմքն անգուսպ եռանդ և արիություն էր արտահայտում: Մարտի ամենաճակատագրական բուպեներին էլ նրան տեսնում էին առջևում:

Հենակետը պահվեց: Օգնության եկած օժանդակ ուժերն ընդլայնեցին այն: Այստեղից սկսվեց մեր հարձակումը Դնեպրի մյուս կողմը»:

ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը Դնեպրի այդ անցման ժամանակ Մուրադյանի ցուցաբերած խիզախությունը գնահատեց ամենաբարձր պարգևով՝ Սովետական Միության հերոսի կոչումով:

Բարձր պարգևն ավելի ոգևորեց հերոսին: Անդրանիկ Մուրադյանը թշնամու վրա նետվում էր ինչպես արծիվ, հերոսության պայծառ օրինակ ցույց տալիս մարտիկներին: Առաջին հրաձգային գումարտակի հրամանատարը միշտ առաջավոր կրակագծում էր, և կարծես գնդակները փախչում էին նրանից:

...4-ը նոյեմբերի 1943 թվական: Սովետական Միության հերոսի գումարտակի առջև խնդիր էր դրված գրոհով վերցնել Միլորադովկա կայարանը: Հարավային ծայրամասում կռիվը բորբոքվել էր թվով գերակշռող թշնամու դեմ:

– Սատանան տանի, ինչո՞ւ գնդացիքը լռեց, – տեղից վեր թռավ դեռևս չչորացած վիրակապով հրամանատարը:

Նա մի պահ կարողացավ կանգնել ոտքի վրա: Գիտակցությունը վայրկենապես մթագնեց, բայց ուժերի գերագույն լարումով գոռաց».

– Է՛յ, գնդացրո՛րդ, կրա՛կ:
Գնդացիքը լռում էր: Մի քանի տասնյակ քայլ էր բաժանում թշնամուց հրամանատարին: Չէ՛ք անցնի, շնե՛ք, չէ՛ք անցնի, – ու մոտ սողաց:

Գնդացրորդը գոհվել էր:
Նորից տկտկաց գնդացիքը: 40 ֆաշիստի նա ոչնչացրեց...
Ու այլևս չտեսավ, թե ինչպես աջ թևից լսվեց հաղթական «ուռա~»-ն:

Մեջքի վրա պառկած՝ մի ձեռքով բռնել էր գնդացրի ձգանը, մյուսն ամուր հենել մայր հողին ու նայում էր հեռու–հեռուները. արդյոք չի՞ երևում Կովկասը, Երևանը, ուր ապրում են կինն ու որդին, որոնց հետ խոստացել էր հանդիպել:

Թերթում ենք: Ու պատմությունը կիսատ է մնում: Որովհետև Ուկրաինայում գարուն է արդեն, և մի անձանոթ ուկրաինուհի նրա գերեզմանին շաղ է տալիս ծաղիկներ:



ԱՆԹԱՆԱՄ ՓԱՌՔՈՎ ՕԾՎԱԾ

Երեսուն տարի է անցել, երբ լռեցին ահեղ պատերազմի վերջին որոտները: Երախտազետ ժողովուրդը սրբությամբ է պահում բոլոր նրանց հիշատակը, ովքեր ընկան հայրենիքի ազատագրության մարտերում: Նրանց անունները հավերժացել են Մեծ հայրենականի ոսկետառ մատյանում: Հայրենիքի քաջարի ռազմիկների հիշատակը սերունդների սրտերում հավերժ պահելու համար ամենուրեք կանգնեցվում են փառքի հուշարձաններ:

Հայրենական պատերազմի հերոսական տարեգրության մեջ անմահության շատ էջեր են գրել նաև Շամխորի շրջանի Չարդախլու գյուղի խիզախ զավակները: Վեհապանձ լեռների գոգում բազմած հինավուրց գյուղի 1.100 արծիվներ մեկնեցին ռազմաճակատ և արիաբար մարտնչեցին գերմանական ֆաշիզմի դեմ՝ Կովկասյան լեռների մատույցներից հասնելով մինչև Բեռլին:

Սովետական Միության կենտրոնական մամուլը, համամիութենական ռադիոն, ճակատային շատ թերթեր իրենց էջերում և հաղորդագրություններում դրվատանքի բազում տողեր են նվիրել Չարդախլուի հերոսներին: Նրանցից հարյուրը պատերազմի տարիներին կրում էին սովետական բանակի բարձր սպայական կազմի՝ գեներալի, գնդապետի, մայորի և կապիտանի, իսկ մոտ այդքան էլ ցածրաստիճան սպաների ու սերժանտական կազմի ուսադիրներ: Լեզենդներ են հյուսվել Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի, զրահատանկային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյանի, զվարդիայի (զոհված) գնդապետ Սմբատ Դանիելյանի և մյուս համագյուղացիների անունների շուրջը:

* * *

Լիտվայի Ալիտուս քաղաքի եղբայրական գերեզմանոցում հանգչում է հայ ժողովրդի քաջարի զավակներից մեկը: Գրանիտե խոշոր սալի վրա պատկերված հնգաթև աստղի տակ փորագրված է. «Գվարդիայի գնդապետ Սմբատ Մելիքի Դանիելյան, 1895–1944»:

Նրա շիրիմը տարվա բոլոր եղանակներին ծածկվում է թարմ ծաղիկներով...

1944-ի հուլիսի 30-ին Նեման գետի անցման ժամանակ թշնամու գնդակը մահացու խոցեցլեզենդար հրամանատարի կուրծքը: Նույն պահին նրա կողքին զոհվեց նաև որդին՝ Լևոնը: Նա հոր համհարզն էր: Իսկ կրտսեր որդին՝ Նորայրը, մեկ այլ ճակատում ռմբակոծիչով մահ ու սարսափ էր տարածում թշնամու վրա:

Երկու համաշխարհային պատերազմների մասնակից, խիզախ հրամանատար Սմբատ Դանիելյանի անունը ոսկե տառերով է գրված Մեծ հայրենականի հերոսական տարեգրության մեջ: Սովինֆորմբյուրոյի հաղորդագրություններից մեկում ասվում է. «Ընկ. Դանիելյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտիկներն օրվա ընթացքում ետ մղեցին հակառակորդի մի քանի գրոհ և ոչնչացրին գերմանական 7 տանկ, մոտ 200 հիտլերական... Ս. Դանիելյանը փորձառու և հմուտ հրամանատար է: Պատերազմի կրակի ու ծխի միջով նա իր ստորաբաժանումը միշտ առաջ է տանում:



Ջախջախելով գերմանացիների դիմադրությունը՝ իրեն ու իր բրիգադին նա օձել է հաղթության անթառամ փառքով»:

Չարդախլուն շատ խիզախներ է ծնել: Դանիելյանը նրանցից մեկն էր: Յոթ տարեկան էր, երբ զրկվեց հորից: Ավագ եղբոր՝ Արշակի խնամքով ու հոգատարությամբ նա կյանքի ասպարեզ է դուրս գալիս: Տասներեք տարեկանում ավարտում է Թիֆլիսի եկեղեցական, ապա առևտրական դպրոցը: 1914 թվականին կամավոր մեկնում է Կովկասյան ռազմաճակատ: Ցարական բանակի կազմում արիաբար մարտնչում է՝ կատարելով անօրինակ սխրագործություններ:

Դանիելյանի մասին իր հուշերում Հ. Բաղրամյանն ասում է. «Ես անկեղծորեն նախանձում էի Սմբատին, որ նա ինձնից շուտ հնարավորություն ունեցավ մասնակցելու մեր հայրենի հողի ազատագրմանը: Միայն 1915 թվականին իրականացավ նրա հետ նույն դիրքերում գտնվելու իմ երազանքը»: Կամավոր ռազմաճակատ մեկնած երկու համազրուդացիները հետագայում դարձան ռուսական բանակի սպաներ: Մինչև վերջ խիզախեցին հայրենիքի թշնամիների դեմ: Տարիներ անց նրանք հանդիպեցին Հայրենական մեծ պատերազմի ռազմադաշտերից մեկում՝ Մերձբալթիկայում:

...Մինչև հիտլերականների ուխտադրուժ հարձակումը Դանիելյանը վարում էր զինվորական զանազան պաշտոններ: 1941-ին նա Ալմա-Աթայի ռազմական հրաձգային դպրոցի պետի տեղակալներ: Այստեղ էլ նշանակվում է հատուկ բրիգադի հրամանատար և դեկտեմբերի 10-ին մեկնում ռազմաճակատ:

Մոսկվայի մատույցներում գերմանական հրոսակախմբերին սովետական բանակն արդեն հասցրել էր առաջին և վճռական հարվածը: Թշնամին ետ էր շարտվել, բայց չէր հրաժարվել Մոսկվան գրավելու իր մտադրությունից: Դեպի հյուսիս-արևմուտք՝ Կալինինի ռազմաճակատում կատաղի մարտեր էին մղվում: Այստեղ՝ երրորդ հարվածային բանակի երկրորդ գվարդիական կորպուսի կազմում, Դանիելյանի ղեկավարած բրիգադը ստանում է մարտական առաջին մկրտությունը:

Պատերազմի հենց առաջին օրից դրսևորվում են փորձառու հրամանատարի ռազմական ունակությունները: Հմուտ ղեկավարման և անձնական խիզախության համար նա 1942 թվականին երկու անգամ պարգևատրվում է մարտական «Կարմիր դրոշի» շքանշանով: Այդպիսի բարձր պարգևի է արժանանում նաև նրա հրամանատարության տակ գտնվող և արդեն գվարդիականի կոչում կրող բրիգադը: Իր հարազատ ստորաբաժանմանը նա հրաժեշտ է տալիս 1943 թվականին: Ծանր վերքերի պատճառով Դանիելյանն ուղարկվում է թիկունք՝ տևական բուժման:

Այդ ժամանակ նրա երկու որդիներն էլ թե՛ մարտերի բովում էին: Լևոնը ծովային հետևակի զենիթային էր: Պատերազմը խանգարել էր նրան ավարտել ռազմաճովային ուսումնարանը, բայց թշնամուն հարվածելու հմտություն ժառանգել էր համազրուդացիներից: Մինչև հոր համհարզը դառնալը «Կարմիր աստղի» շքանշանակիր ռազմիկը ոչնչացրել էր տասնյակ ինքնաթիռներ, իսկ Նորայրը պատերազմը դիմավորեց սավառնորդների դպրոցն ավարտած: Տասնյակ անգամներ կտրել է ճակատային գիծը և ռումբեր թափել թշնամու գլխին: 1943-ին լրանում է նրա 20 տարին: Հայրը, շնորհավորելով որդու ծննդյան օրը, գրում է. «Համբուրում եմ քեզ քսան անգամ՝ քո տարիների հաշվով: Ցավում եմ, որ քեզնից հեռու եմ գրտնվում: Ցանկանում եմ քեզ հաջողություն՝ ֆաշիստների դեմ մղվող մարտերում և հաջողություն՝ անձնական կյանքում»:



1944-ին սովետական բանակի հուժկու հարվածներից ռազմաճակատի գիծը որոշ տեղերում ընդհուպ մոտեցել էր պետական սահմանին: Գվարդիայի գնդապետ Սմբատ Դանիելյանն ապա-քինվելուց հետո ուղարկվում է Առաջին մերձբայթյան ռազմաճակատի հրամանատարության տրամադրության տակ: Այստեղ էլնա հանդիպում է իր մանկական ընկերոջը և Կովկասյան ճակատի նախկին խիզախ մարտիկին, որն արդեն ռազմաճակատի հրամանատարն էր: Հ. Բաղրամյանի երաշխավորությամբ գնդապետ Դանիելյանը նշանակվում է 18-րդ գվարդիական հրաձգային կարմրադրոշ դիվիզիայի հրամանատար:

«Բելոռուսիայի և Լիտվայի ազատագրության համար մղված մարտերում իմ փառավոր հայրենակիցը մեկ անգամ չէ, որ հերոսության օրինակ է ծառայել,– գրում է Հ. Բաղրամյանը:–Այդ ժամանակաշրջանում հատկապես առանձնակի ուժով դրսևորվեցին նրա տաղանդը, հրամանատարիմարտական բարձր հատկությունները:Նա հաճախ ընդունում էր համարձակ, երբեմն հանդուգն վճիռներ և խիզախությամբգրոհի էր տանում գվարդիականներին»:

Անվեհեր հրամանատարն իր ավագ որդու հետ կյանքը զոհաբերեց եղբայրական Լիտվայի ազատագրության համար:

ԵՐԳԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Նրա մասին երգը Մեծ հայրենականում մարտիկին ձոնված առաջին երգն է: Գուցե չափազանցություն է, բայց այդպես են ասում հեռավոր Ուկրաինայում նրա մարտական ընկերները, պատմաբանները: Ես հավատում եմ: Նա ընկավ ֆաշիստների ուխտադրուժ հարձակման երրորդ օրը,ընկավ, երբևէ չմտածված, որ իր մասին կերգեն.

Давайте же, споемте, товарищи песню

Пусть песня летит по степям,

Над Равою-Русской, землей украинской

Где храбрый лежит Степанян.

...Մակար Ստեփանյան՝ ավագ լեյտենանտ, սահմանապահ ջոկատի կոմիսարի տեղակալ: Նոր էր վերադարձել գործուղումից, տուն չայցելած՝ ներկայացավ հրամանատարին:

–Ջոկատը նախապատրաստել է պետք:Կդիրքավորվեք քաղաքի արևմտյան հատվածում, սահմանի դիմաց:

Լուսադեմին երկինքը բոցավառվեց, համազարկերից գետինը ցնցվեց: Քաղաքը կործանվում էր, արկերի ու ռումբերի վայրի ոռնոցը ականջ էր խլացնում:



Բոցերի մեջվերջին հրաժեշտը ընտանիքին: Վեց ամսական անխոս մի մանկիկ, հուզմունքից գլուխը կորցրած հեզիկ մի կին, նրա ողջգերդաստանը, որից բաժանվում էր այդքան անսպասելի ու անողորմաբար: Գրկախառնություն, արցունքներ և միայն մի բառ՝ «դեպի անտառ»:

Նրանք այլևս չհանդիպեցին: Մաղարթախիտ անտառը կուլ տվեց տնավեր մարդկանց, հազարների ապաստան և գերեզման դարձավ:

Նրանք այլևս չհանդիպեցին...

Մարտը թեժանում էր: Թշնամին, հանդիպելով անսպասելի դիմադրության, ավելի կատաղորեն է նետվում հարձակման, բայց գնդացիները կարկտահարում են նրա շարքերը: Զենքերի փողերը շիկացել են անընդմեջ կրակելուց, իսկ ֆաշիստներին վերջ չկա: Գալիս են տանկերով, մոտոցիկլետներով, ավտոմեքենաներով, շարքերով:

– Թողմոտենան, կարծես զորահանդեսի են ելել, – ջղագրգիռ խոսում է Մակարը: – Կրակ, – հանկարծ որոտաց նա ու ճարձատեցին բոլոր հրազենները: Թշնամու շարքերը երերացին: – Ուղիղ նշանառությամբ տանկերին՝ կրակ. Գնդացրորդներ, կտրե՛լ հետևակը...

Մարտի հմուտ դեկավարումը տվեց ցանկալի արդյունք: Տարեկանի հասկերի ծովում արդեն ծխում են անշարժացած թրթուրավոր վիշապներ: Թշնամին նահանջեց:

Լռեց: Մուրը ծածկեց ամեն ինչ: Այլումինե ճաշամանների հատակը քերոզգոլների ձայնն էր լսվում միայն: Ուտում էին լուռ, մտազբաղ դեգերում յուրաքանչյուրն իր երևակայության ծովում:

Տեսնես ո՞ւր են Սոֆյան, Սվետան: Հասա՞ն անտառ, ո՞ղջ են, թե՞ ...

Մակարը չհետևեց հոգնած ուղեղին... Սողեսող մոտեցավ գնդացրորդին, գրկեց նրա ուսը:

– Լա՛վ դաստվեցիր ֆաշիստներին, Վասյա՛, քնի՛ր, ես կհսկեմ:

Լուսադեմին կրկնվեց նույնը, նախորդից առավել ուժեղ ու դաժան: Մեկ օր տևող անհաջող գրոհից հետո ֆաշիստական ստորաբաժանումներն ավելի մոլեգին էին հարձակվում: Թե որքան կտներ դա, ոչ ոք չգիտեր: Բայց բոլորն էլ գիտեին, որ փամփուշտները քիչ են, խնայել էր պետք: Հրետանին անխնա գնդակոծում է սահմանապահ ջոկատի դիրքերը: Ռավա–Ռուսսկայայի արևմտյան հատվածում մերթընդմերթ բեռնաթափվում են ումբակոծիչները: Ահա ուր որ է կերևան նաև տանկերը:

Մակարը դիրքից դիրք է անցնում, ոգևորում է իր արծիվներին:

– Պ՛հնդ կացեք, տղանե՛ր, մենք շներին ճանապարհ չե՛նք տա:

Բոլորը լի էին հավատով դեպի Մակարը, դեպի իրենց զգայուն ու հոգատար ընկերը, որ միշտ խոսքով ներգործում, նրանց մեջ բարձր էր պահում մարտական ոգին: Քանի՛ – քանի՛ զինվորների դեռ խաղաղ օրերին նա սովորեցրել էր արի ու խիզախ լինել, չընկճվել ծանր պահին, միշտ ելք գտնել դժվարին կացությունից: Այդ հատկությունների փորձության ժամն էր: Նրանք կռվում էին մոլեգնած՝ դիրքերը զիջելու մասին առհասարակ չստածելով: Ընկել էին շատերը: Մնացած տասը կռվում էին հիսունի փոխարեն: Բարձրահասակ, վայելչակազմ, նիհարավուն Մակարը միշտ այնտեղ էր, որտեղ հատկապես դժվարին դրություն էր ստեղծվում:

Ֆաշիստների երրորդ անհաջող գրոհից հետո նորից անդորր իջավ: Շատ տեղերում նրանք արդեն հարյուրավոր կիլոմետրեր խորացել էին սովետականների խորքը, բայց Ռավա–Ռուսսկայան կանգուն էր, ինչպես հերոսական Բրեստը:



–Կդիմանա՞նք արդյոք չորրորդ գրոհին, թե...Ո՛չ, չե՛նք նահանջի, հրաման չկա՛, ճամփա չե՛նք տա, – խորհում էր Մակարը:

Երրորդ անբուն գիշերն էր, որ և եղավ վերջինը:

...Արևի սկավառակը հագիվ էր նշմարվում վառողի թանձր ծխիցգոյացած ամպաշերտի տակից: Երկաթե հեղեղ էր տեղում: Աշխարհն ասես կործանվում էր: Թշնամին արագ առաջ էր գալիս: Արկերի ու գնդակների տեղատարափից հնարավոր չէր գլուխ բարձրացնել:

– Մի՞թե սա վերջն է, – ինքն իրեն խոսեց Մակարը և շուրթերի դողոցով ծոր տվեց հոգեզմայլ մեղեդին: Երգում էր՝երևի մտաբերելով իր մանկությունը, Արաքսի հովտում անհոգ վագ տալը, ընկերներին, մանկիկին, կնոջը... Երգում էր, չմտածելով, որ մի քանի ժամից իր մասին ևս երգ կհյուսվի, ու զինակիցներնիր անունը շուրթերին կխոյանան թշնամու վրա: Ի՞նչ իմանար:

Նայելով վիրավոր ու հյուծված մի բուռ մարտիկներին՝ նա հասակով մեկ բարձրացավ տեղից և, «Առա՛ջ» գոռալով, հողմի նման նետվեց դեպի թշնամին: Լեյտենանտը հակագրոհի տարավ իր քաջերին: «Առա՛ջ»,– գոռում էր հրամանատարը՝ ավտոմատով նոսրացնելով ֆաշիստների շարքերը: Հանկարծ ամեն ինչ խավարեց: Ընկրկեց կոմիսարը և, բզկտված կրծքով հնձված հասկի նման, ընկավ այրվող արտում:

...Ծնվեց երգը: Ծնվեց մարտի թեժ պահին, վրեժի ցասումով.

Мстить за тебя будем храбро и смело,

Клянемся мы в этом стране,

В дни битвы победной и клятвы заветной

С врагами сочтемся в тройне.

Լռեցին մահաբեր որոտները: Քսաներեք տարի Սոֆյա Գրիգորևնան և նրա դուստրը՝ Սվետլանան, սգում էին իրենց կորուստը: Այդ աղետալի գիշերվանից հետո նրանք այլևս...

Հանդիպում անցյալի հետ: Հուշեր, հուշեր: Ծանոթ վայրեր, փողոցներ, տներ, մարդիկ: Իսկ նա...Ո՛չ, նա չի մեռել: Նա ապրում է հարյուրավոր այնմանկիկների սրտերում, որոնք ամեն օր ծաղիկներով են զարդարում հերոսի շիրմաթումբը ևնրա անունով մեծ գործի հավատարմության երդում ընդունում: Նա ապրում է Ռավա–Ռուսսկայաքաղաքի գիշերօթիկ դպրոցի բոլոր սաների հոգում, որոնք այսօր հպարտությամբ կրում են «ստեփանյանականներ» անունը:

Այդստեփանյանականներն էին, որ երկարատև որոնումներից հետո Կրասնոդարում գտան սիրելի հերոսի ընտանիքը:

Ամեն տարի հոկտեմբերի 15–ին՝ Մակար Ստեփանյանի ծննդյան օրը, Սոֆյա Գրիգորևնան և Սվետլանանայցելում են Ռավա–Ռուսսկայա,ուր իրենց հարազատի գերեզմանի մոտ տեղի էունենում պիոներական դրուժինայի ավանդական հավաքույթը: Ամեն տարի այդ օրը կարմիր վզկապավորները հաշվետվություն են տալիս իրենց կատարածգործերի մասին: Այդպիսի հերթական հավաքներից մեկի ժամանակ պիոներներն իրենց հիմնած մարտական փառքի թանգարանի համարստացան սիրելի հերոսի նկարը և մի քանի փաստաթղթեր: Նրանք մեծ հետաքրքրությամբ ունկնդրեցին Ստեփանյանի մարտական ընկերոջ՝ պահեստիփոխգնդապետ Ալեքսանդր Յաբլոնսկուն: Նա պիոներներին պատմեց



խիզախ սահմանապահի կյանքի վերջին օրերի մասին: Ի դեպ, նա Ստեփանյանի մասին շատ է պատմելու գրել: Նրա դուստրը՝ Էլեոնորան, հերոս սահմանապահների եղբայրական գերեզմանի կոմպոզիցիոն քանդակի ստեղծողն է:

Ալեքսանդր Իսակիչը խորին ակնածանքով ու հուզմունքով է խոսում Մակարի մասին: Ստեփանյանը 91-րդ ջոկատն է ընդունվել 1940-ին: Ծառայել է որպես սակրավորների դասակի հրամանատար: Հետո մեկնել է սովորելու և վերադառնալով դարձել կոմերիտական ռազմիկների ղեկավարը: «Հանգիստ ննջիր, մեր մարտական ընկեր: Ուկրաինական հողը հավերժ կպահպանի քո աճյունը, իսկ քո փառքը կհասնի արևավառ Հայաստանին, կտարածվի երկրով մեկ»: Այս բառերը փորագրված են հերոսի գերեզմանին կանգնեցված կոթողի վրա:

Նրա փառքը, իրավ, տարածվում է ոչ միայն Ուկրաինայում: Նրա անունը կարդում են «Սահմանային արահետներով» և «Արևմտյան սահմանում» գրքերի հազարավոր ընթերցողներ, որոնցում պատմվում է հերոսի կյանքի ու սխրանքի մասին: Նրա անունը երգում են ամբողջ Արևմտյան Ուկրաինայի պիոներ-դպրոցականներ, զինվորական դպրոցների սաները:

Մակար Ստեփանյանի մասին երգը ստեղծվելուց քսաներեք տարի անց Ռավա-Ռուսսկայայի դպրոցականները հանդիսավոր խարույկի շողերի ներքո հորինում են պատերազմի բովում ծնված երգի շարունակությունը.

**Давайте же, споемте, товарищи песню
Пусть песня летит по степям,
О том, как хранит безопасность отчизны,
Второй часовой Степанян.**

«Երկրորդ ժամապահ Ստեփանյանը» Մակարի կրտսեր եղբայրը՝ Վլադիմիր Ստեփանյանն էր, որը 1964-ին ծառայում էր սահմանապահ զորամասերում և այցելել էր եղբոր գերեզմանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏԻ ՀԵՐՈՍԸ

1945թվականի փետրվարի 15-ից հայկական Թամանյան դիվիզիան Օդերի ձախ ավին մարտեր էր մղում երկու կիլոմետր երկարությամբ, ութ հարյուր մետր լայնությամբ հենակետում:

Հակառակորդի դիրքերի հեռավորությունը տեղ-տեղ հասնում էր 60 մետրի:

«Չափազանց լարված վիճակ էր, - պատմում է Սովետական Միության հերոս Հրանտ Բաբայանը: - Ամեն վայրկյան հնարավոր էր անակնկալ հարձակում: Գիշերվա կեսին թշնամին անաղմուկ ներխուժեց մեր դիրքերը: Հիտլերյան հրամանատարությունը որոշել էր վերացնել հենակետը:

Այդ մարտերում կոփված Բաբայանի ստորաբաժանումը Ֆրանկֆուրտի մատույցներում ակտիվորեն մասնակցեց հիտլերականների խիստ ամրացված պաշտպանության ճեղքմանը: Էսէսականների գիշերային հարձակումը ճնշվելուց հետո թշնամին նույնիսկ ուշքի գալու ժամանակ չունեցավ: Գումարտակն արդեն սեպաձև մխրճվել էր նրա մարտակարգերի մեջ և, ընդարձակելով ճեղքվածքը, արիաբար ետ էր շարտում հիտլերականներին: Անընդմեջ իրար հաջորդող շեշտակի գրոհները խուճապի էին մատնել ֆաշիստներին: Օգտվելով դրանից՝ մայր Բաբայանի գումարտակը շրջանցում է



թշնամուն և նրան դուրս քշում մոտակա բարձունքից, որտեղից նա փակել է Ֆրանկֆուրտի ճանապարհը: Գումարտակի վճռական գործողությունների շնորհիվ մերկացվում է թշնամու պաշտպանության ձախ թևը, և հարևան ստորաբաժանումները հնարավորություն են ստանում շարժվել դեպի արևմուտք՝ Բեռլին: Չնայած անձնուրաց հրամանատարը վիրավորվում է, բայց չի թողնում մարտի դաշտը և մինչև Ֆրանկֆուրտի գրավումը շարունակում է ղեկավարել իր ստորաբաժանման գործողությունները:

Ապրիլի 10... Սովետական բանակի զորամասերը սրընթաց գնում են առաջ, դեպի Բեռլին: № 400-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար, մայոր Հրանտ Բաբայանն իր անձնական խիզախության և անօրինակ սխրանքների համար արժանանում է կառավարական ամենաբարձր պարգևի՝ Սովետական Միության հերոսի կոչման:

Ահա թե ինչու այսօր առանձնապես ուրախ է հիսուներկուամյա հերոսը: Արդեն երեսուներորդ անգամ նա իր հարազատներով ու բարեկամներով հանդիսավորնշում է այդ կարևոր իրադարձությունը:

Հերոսի կուրծքը զարդարում են նաև կառավարական այլ բարձր պարգևներ՝ «Կարմիր աստղի», «Ալեքսանդր Նևսկու», «Բոգդան Խմելնիցկու», երրորդ աստիճանի շքանշաններ և բազմաթիվ մեդալներ:

Մինչև Էլբա հասնելը հայ ռազմիկն ակտիվորեն մասնակցել է մեր երկրի մայրաքաղաքի պաշտպանության մարտերին: Կոտայքի շրջանի թագազյուղացի պատանին, քսան տարեկան հասակում, զինվորական դպրոցի շրջանավարտի համազգեստով խրամատ մտավ Մոսկվայի մատույցներում: Երբ կազմավորվեց ազգային Թամանյան դիվիզիան, նա եկավ հայրենակիցների մոտ: Փրփրաբաշ Թերեքի ափին պաշտպանական դիրքեր գրավեց Հայկական 89-րդ դիվիզիան: Այստեղ էլ Հրանտ Բաբայանը ցուցաբերեց հրամանատարի իր ձիրքն ու շնորհքը:

Սկսվեցին Մալգոբեկ քաղաքի համար մղվող համառ մարտերը: Մոտակա բարձունքներից մեկում ամրացած թշնամին կատաղի գնդացրային կրակի տակ էր առել հարձակման անցած զորամասերին:

1943 թվականի հունվարի մեկին, հիսուն մարտիկների գլուխ անցած, Բաբայանը շեշտակի գրոհով նվաճում է բարձունքը և բացում մարտական ընկերների ճանապարհը:

Հանդուգն փորձը հետագայում օգնեց անվեհեր ռազմիկին 1944 թվականին թշնամուց խլելու Սևաստոպոլի մոտակայքում ընկած Գորնայա բարձունքը, որն անանցանելի պատնեշի նման արգելակում էր հերոս քաղաքն ազատագրողների առաջընթացը:

Այդ երկու ճակատամարտերում ցուցաբերած անձնական արիության և ռազմական հեռատեսության համար հայ հրամանատարը պարգևատրվեց «Կարմիր աստղի» և «Կարմիր դրոշի» շքանշաններով:

Հերոս թամանյանցին հաղթանակով ու պատվով վերադարձավ ռազմաճակատից: 1947 թվականին նա զորացրվեց և հանրապետության հասարակական ու տնտեսական կյանքի ակտիվ մասնակիցը դարձավ: Հրանտ Բաբայանը մի քանի անգամ ընտրվել է շրջանային և քաղաքային սովետների դեպուտատ, լավ աշխատանքի համար պարգևատրվել Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:



ԽՈՐԻՆ ԱԿՆԱԾԱՆՔՈՎ

Գեներալական համագգեստը հազին՝ նա հաճախ է գրոսնում լայնահուն պողոտայով, քայլում դանդաղ ու մտախոհ: Շատերը բարևում են, գորովալից հայացքով երկար ուղեկցում նրան: Իսկնա ժպտում է, գլխով անում ու շարունակում ճանապարհը: Երբեմն մի պահ կանգ էառնում, ու կարծես ամպում է նրա ճակատը:

Հիշողության մեջ վերակենդանանում են նրանք, ովքեր հերոսաբար ընկան բաղձալի հաղթանակի արշալույսին...

1945–ի մայիսի սկիզբն էր: Մեծ հայրենականի ահեղ մարտերում իրեն փառքով պասկած հայկական դիվիզիան Բելոռուսական ռազմաճակատի ստորաբաժանումների կազմում գրոհում էր Բեռլինը: Արյուն էր թափվում յուրաքանչյուր տան, շենքի համար: Եվ հանկարծ մեր զորքերի դեմհանդիման, պատնեշի նման կանգնեց բազմահարկ ամրոցը, որից տեղում էր գնդակների տարափ: Գեներալը թողեց հրամանատարական կետը, կրկին հայտնվեց կրակային բնագծում՝ մարտիկների կողքին:

– Համազա՛րկ:

Որոտացին թնդանոթները: Ամրոցը շրջանցվեց, ու քիչհետո վերին պատուհաններից մեկում երևաց սպիտակ դրոշը: Վեց հազար զինվոր, սպա և քաղաքացիներ հանձնվեցին հաղթողին:

Հաղթահարվեց դեպի Ռայխստագ տանող ուղու ամենադժվարին խոչընդոտներից մեկը:

Անձնական շնորհակալություն ռազմաճակատի հրամանատար Ժուկովից՝ արդեն երկրորդ անդամ: Իսկ առաջի՞նը:

Գրքեր, հանդեսներ, թերթեր...Նրանց էջերումկինոժապավենի նման ձգվում է դիվիզիայի անցած մարտական փառքի ուղին, մեկը մյուսին են հաջորդում անվեհեր հրամանատարի՝ Նվեր Սաֆարյանի կյանքի հերոսական դրվագները:

Իսկ այժմ նա հանգիստ նստած՝ վառում է գլանակը:

–Անցածը պետք է հիշել, որպեսզի այլևս թույլ չտրվի,– սկսում է զրույցը...

1943–ին էր, Կովկասյան նախալեռներից Նովոռոսիյսկ էր հասել Հայկական 89–րդ դիվիզիան, որը կորցրել էր շատ զինվորներ ու հրամանատարներ: Միավորման դեկավարությունը հանձնվեց նվեր Սաֆարյանին: Զինվորական ակադեմիայի սանը մարտերում էր պատերազմի առաջին իսկ օրից և մինչև Նովոռոսիյսկ գալը, որպես 285–րդ դիվիզիայի հրամանատարի պաշտոնակատար, մասնակցել էր Ուստ–Լաբինսկի, Տիխորեցկի և բազմաթիվ այլ քաղաքների ազատագրմանը:

Համալրված ստորաբաժանումը շուտով վերսկսեց գոտեմարտը:

Առջևում թշնամու պաշտպանական «կապույտ գիծն» էր:Ճեղքել էր պետք:

Երրորդ օրն ահեղ որոտը բռնեց շրջակայքը: Հրամանատարն իր դիտակետից հետևում էր մարտի ընթացքին և տեսնում, թե ինչպես զինվորները, հաղթահարելով ականապատ դաշտերը, անվեհեր մխրձվում էին թշնամու մարտակարգերը: Ընկնում էին շատերը, բայց ահեղ գրոհը կանգնեցնել հնարավորչէր:Ազատագրվեց Թամանը, ապանհակառակորդի պաշտպանության երկրորդ գիծը:



Հայ ժողովրդի քաջարի զավակների մասին սկսեցին խոսել ամբողջ ռազմաճակատում: Այդ մարտերի ժամանակ էր, Դուգայա բարձունքը գրավելիս, որ Հունան Ավետիսյանը կրծքով փակեց թշնամու հրակնատը:

Սովետական Միության մարշալ Տիմոշենկոն անձամբ շնորհավորեց հմուտ հրամանատարին և նրա դիվիզիայի հաջողությունը: 1943 թվականի մայիսյան այդ ահեղ օրերից հետո Նվեր Սաֆարյանին շնորհվեց գեներալի կոչում, իսկ դիվիզիան անվանվեց Թամանյան:

Ահա և մի ուրիշ դրվագ միավորման մարտական սխրանքներով լի պատմությունից:

1944 թվականի գարնանն էր: Սովետական բանակի հուժկու զարկերից ֆաշիստական հորդաները հետզհետե թողնում էին իրենց դիրքերը: Ազատագրվում էր Ղրիմը: Հասել էր պատերազմի սկզբում 250 օր թշնամուն հերոսաբար դիմադրած քաղաքի՝ Սևաստոպոլի ազատագրման ժամը:

Սապուն-Գորան Գորնայա: Սևաստոպոլի մոտակայքում ընկած այս երկու բարձունքների համար մղված անօրինակ մարտերի մասին, հիրավի, ոսկյա տառերով է գրված Մեծ հայրենականի պատմության էջերում: Թշնամու խոր էշելոնացված պաշտպանական գիծը, որ համարվում էր անանցանելի, հողմացրիվ արվեց 4-5 օրում: Եվ ամենադժվարին հատվածում՝ դեպի Սևաստոպոլ ճանապարհի բացեցին թամանցիները:

Որքան մոտենում էր պարտության օրը, թշնամին այնքան կատաղի էր դառնում: Նա հուսահատորեն կառչում էր բնական ամեն մի արգելքից, ճգնում ձգձգել օրհասական պահը: Այդպես՝ ֆաշիստական ստորաբաժանումները կառչեցին նաև Օդերից:

Գիշեր է, խավար: Գետափին կանգնած գեներալը սպաներին առաջադրանք է տալիս. «Գետն անցնել է պետք և ամրանալ այն ափին: Դժվար է»:

Մի ճողփյուն, և դարանակալ գնդացիները սկսում են ճարճատել: Խիզախները լողում են զգույշ՝ սուզվելով, շնչառությունը պահած: Ահա և նվիրական ափը: Լուսաբացին թշնամին քթի տակ տեսավ սովետական հրացանավորներին: Անակնկալից կատաղի գրոհի անցավ: Գլուխ բարձրացնել հնարավոր չէր, իսկ արյունով ձեռք բերած փոքրիկ հողակտորը թողնել ոչ ոք էլ մտադիր չէր: Անընդհատ գնդակների տարափի տակ՝ 60 օր պահպանվեց 2,5 կիլոմետր երկարությամբ և 800 մետր լայնությամբ այդ տարածությունը:

Ապրիլի կեսերին սկսվեց Սովետական բանակի շեշտակի հարձակումն այդ ուղղությամբ: Գիշերային ահեղ մարտով թամանցիները ճեղքեցին ֆաշիստների մարտակարգերը:

Ստորաբաժանման հերթական այս խիզախության համար ռազմաճակատի հրամանատար Գ. Կ. Ժուկովը Նվեր Սաֆարյանին հայտնեց անձնական շնորհակալություն:

Երեսուն տարի է անցել այդ ահեղ օրերից... Հիմա կյանքն այլ է, երկինքը կապույտ է ու ջինջ, իսկ մարդկանց աչքերում հուրհրատում է երջանկության ժպիտը: Այն ահեղ օրերը դարձել են միայն անցածի վերհուշ, որով, սակայն, պայմանավորված է այսօրվա բերկրալից կյանքը, ստեղծագործ աշխատանքը:

Իսկ գեներալի համազգեստով մա՞րդը:

Պաշտոնաթող գեներալն այժմ ցանկալի հյուր է ամեն մի պիոներական կազմակերպության, դպրոցական հավաքի, ուր պատմում է խիզախների մասին, որոնք ընկան մատաղ սերնդի երջանիկ այսօրվա համար:



Այլ Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոց: Որոտում են ծափերը, կթիթեռնիկի նման մի դպրոցական նրա վզովն է կապում կարմիր փողկապը. սիրելի գեներալն ընդունվում է պատվավոր պիոներ, իսկ դրուժինան կոչվում է նրա անունով:

Այդ օրը սաֆարյանականների շարքերն անցան տասնյակ հոկտեմբերիկներ, որոնք երդվեցին լավագույն գործերով շարունակել հայրերի հերոսական ավանդները:

Ահա այսպես, դպրոցից դպրոց, գործարանից գործարան, ամենուրեք հրավիրում ու լսում են Մեծ հայրենականի փառաբանված գորավարին, արտահայտում իրենց անհուն երախտիքը:

Նյութերն ըստ Կ. Ց. Ղալաչյանի, Անթառամ փառքով օժված, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:



ՀՈՒՇԱՐՁԱՆ

Մեր սիգապանձ Ջանգեգուրի,
 Սարերի գարդ, վարդ Գորիսում,
 Կովում զոհված հերոսների
 Հուշարձանն է հպարտ կանգնում:
*Նրանց արդար հոգիներից
 Բխում է սառ, զուլալ աղբյուր,
 Ամեն անգամ ջուր խմելիս
 Շրթունքներով կտանք համբույր:*

Նրանք ընկան Հայրենիքիս
 Համար մղված ահեղ կովում,
 Ու մնացին հավերժական,
 Ամեն հոգում, ամեն սրտում:
*Նրանց արդար հոգիներից
 Բխում է սառ, զուլալ աղբյուր,
 Ամեն անգամ ջուր խմելիս
 Շրթունքներով կտանք համբույր:*

Գուսան Աշոտ, չենք մոռանում
 Հայրենիքիս հերոսներին,
 Հերոսներով ենք զորանում
 Ու հասնում մեր մուրազներին:
*Նրանց արդար հոգիներից,
 Բխում է սառ, զուլալ աղբյուր,
 Ամեն անգամ ջուր խմելիս
 Շրթունքներով կտանք համբույր:*

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գարունբացվեց, գարունեկավ,
 Անձրևի տեղ արյուն էկավ,
 Մայր աղավնու խաղաղ բույնը,
 Չագուկ փախցնող ուրուրն էկավ:



Արձիվները վեր խոյացան,
Սև-սև ամպերն իրարանցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան...

Անմար լույսեր հոգիների՝
Իմ քարակերտ հուշարձաններ,
Նոր պատմություն սիրանքների՝
Իմ հրակերտ հուշարձաններ:

Սերունդները միշտ ուժ կառնեն,
Հարս ու աղջիկ մոմ կվառեն,
Ես էլ նրանց հետ կվառեմ,
Հուշարձաններ, հուշարձաններ:

Հասակներն եք քաջ-քաջերի,
Փայլ ու կրակ կայծակների,
Հազարերազ, մուրազների,
Իմ փառակերտ հուշարձաններ:

Արձիվները վեր խոյացան,
Սև-սև ամպերն իրարանցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան:

Ձեր նախազարդ սուրբ քարերում,
Մայրն իր որդու աչքն է տեսնում,
Քույրն իր եղբոր կանչը լսում,
Իմ վեհակերտ հուշարձաններ:

Հուշարձաններ՝ հավերժ, կանգուն,
Երկինքն էլ է ձեզ շափաղում,
Աշոտն երգեց ձեր փառքն անհուն
Իմ նորակերտ հուշարձաններ:



1. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ - (մենակատար՝ Բաֆֆի Հովհաննիսյան) -
<http://gusanashot.com/song.php?song=105>
<http://www.youtube.com/watch?v=vjikHrLagi4>
2. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ - (մենակատար՝ Արամայիս Մարտիրոսյան) -
<http://www.youtube.com/watch?v=vhWFP9qW0zw>
3. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ - (մենակատար՝ Արմեն Հավհաննիսյան) -
<http://www.youtube.com/watch?v=k-2RmtYZagY#t=78>
4. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ - (մենակատար՝ Արտավազ Մելքոնյան,
 <<Երգերգոց>> հեռուստանախագիծ - <http://www.youtube.com/watch?v=uY8UQXd67Os>
5. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ - /մենակատար՝ Արթուր Դադայան, նվագակցում են՝ Լ. Հայրապետյան, Վ. և Ա. Տոռոյաններ, Ա, Մանուգյան, Ս, Հովակիմյան) -
<http://www.youtube.com/watch?v=o2a1hwb6kI>

Помните! Через века, через года,- помните!

О тех, кто уже не придет никогда,- помните!

Не плачьте! В горле сдержите стоны, горькие стоны.

Памяти павших будьте достойны! Вечно достойны!

Хлебом и песней, мечтой и стихами, жизнью просторной,

Каждой секундой, каждым дыханьем будьте достойны!

Люди! Покуда сердца стучатся,- помните!

Какою ценой завоевано счастье,- пожалуйста, помните!

Песню свою отправляя в полет,- помните!

О тех, кто уже никогда не споет,- помните!

Детям своим расскажите о них, чтоб запомнили!

Детям детей расскажите о них, чтобы тоже запомнили!

Во все времена бессмертной Земли помните!

К мерцающим звездам ведя корабли,- о погибших помните!

Встречайте трепетную весну, люди Земли.

Убейте войну, прокляните войну, люди Земли!

Мечту пронесите через года и жизнью наполните!..

Но о тех, кто уже не придет никогда,- заклинаю,- помните!

(Р.Рождественский)

Z-PR սոց. Հարցման կենտրոնը Երևան քաղաքում 100 հոգու շրջանակում սոց. հարցում է իրականացրել՝ պարզելու համար, թե ինչ են մտածում քաղաքացիները՝ 1945թ. մայիսի 9-ի հաղթանակի վերաբերյալ:

- Ստորև ներկայացնում ենք տվյալները.
1. Մայիսի 9-ը մեծ հաղթանակ է գոյատևման երաշխիք էր հայերի համար - 87%
 2. Հայերն այլ ընտրանք չունեին եւ ստիպված են եղել մասնակցել պատերազմին - 7%
 3. Դա Խորհրդային Միության հաղթանակն էր, և հիմա պետք է այլ կերպ նայել պատմությանը - 6%

ՍՈՍԵՉԱՆԴՈՅԱՆ, Իրավունքներթ – Չարկերակ

Մայրաքաղաքի քարե վկաները - «Անե՛ծք պատերազմին»



ԱրաՆախչարյան

«Անե՛ծք պատերազմին» («Ո՛չ պատերազմին») արձանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1977 թ. մայիսի 7-ին «Հաղթանակ» զբոսայգում: Բացմանը խոսք ասացին Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Մ. Մուրադյանը, Ս. Պետրոսյանը («Նաիրիտ» ԱՄ ապարատավարների բրիգադավար, սոցալիստականա շխատանքի հերոս), Ս. Մարտիրոսյանը (պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ, Սովետական Միության հերոս), Ս. Սաֆարյանը (ՀՆՄ (Հայաստանի նկարիչների միություն) նախագահ):

Հուշակոթողի վրա հայերեն և ռուսերեն գրված է. «Թո՛ղ երբեք պատերազմ չլինի, թո՛ղ ոչ ոք որդի չկորցնի»:

Հուշարձանի նյութը՝ տուֆ է, բարձրությունը՝ մոտ 8 մ, քանդակագործ՝ Վահան Խաչիկյան, ճարտարապետ՝ Ֆ. Չարգարյան:

Քանդակի հեղինակ Վահան Խաչիկյանին այս աշխատանքի համար հետմահու շնորհվել է խաղաղության համար պայքարին նվիրված միջազգային ցուցահանդեսի հուշամեդալ:

Նյութիաղբյուր՝ http://nakshkaryan.blogspot.com/2013/09/blog-post_2105.html



ԱրաՆախշարյան

Զինվորընամակերստացել...

1942թ. Հունիսին Երևանում լույս տեսավ Հրայրա Քոչարի «Հերոսների ծնունդը» գիրքը, որը նաև ենթավերնագիր ուներ՝ «Նամակներ գործող բանակից»։ Գրողի մտահղացումն ինքնին ուշագրավ էր. Կովող մարտիկը նամակներ է ստանում թիկունքից, մտովի վերադառնում տուն, հարազատների գիրկը, լուրեր առնում՝ ինչ կա-չկա և ապրում դրանցով, բայց նամակներ գրում է նաև նա, տնեցիներին պատմում իր մասին՝ ողջ-առողջ եմ, հուսադրում՝ մի՛ մտածեք, շուտով պատերազմը կավարտվի, և մենք նորից միասին կլինենք։ Այդ նամակները պետք էին և՛ ռազմաճակատին, և՛ թիկունքին՝ ապրեցնում էին մարդկանց, ուժ տալիս, գոտեպնդում, և ահա Քոչարը, որ ռազմաճակատային թերթերի թղթակից

էր գործող բանակում, որոշում է ինքն ստանձնել յուրատեսակ նամակագրի դեր, ինքը պատմել թիկունքայիններին կովող մարտիկների մասին և իր գրառումները նամակների տեսքով հասցեագրել նրանց։

Գիրքն արագորեն տարածվեց Հայաստանում, և շատերը նրա էջերում տեսան իրենց հարազատներին, նրանց հետ անցան մարտերի բովով և, ճիշտ կլինի ասել, կովեցին նրանց հետ։

Քոչարի գիրքը, որի հերոսներն իրական մարդիկ են (նրանցից ոմանց նա ճանաչել է դեռևս պատերազմից առաջ), լի է մարտական դրվագներով, ու դրանց մասին գրողը պատմում է որպես ականատես ու անմիջական մասնակից, բայց գրողի սուր աչքը ռազմի դաշտում այլ դրվագներ էլ է որսում։ Ասենք՝ այն դրվագը, թե զինվորն ինչ ապրումներով է ձեռքն առնում տնից ստացված նամակը, ինչ զգացումներով, սրտի դողով ու կարոտով է բացում ու կարդում, ավելի ճիշտ կլինի ասել՝ կլանում այն։

Եղավ այնպես, որ շարքային Պետրոս Պետրոսյանը տնից մի օր միանգամից երեք նամակ ստացավ։ Ահա կնոջ՝ Նատալյայի նամակը։ Կյանքն այդ կապուտաչյա ռուս աղջկան Կովկաս էր նետել 1919-1920 թվականներին, և Պետրոսի ու նրա պատահական հանդիպումը դարձավ ճակատագրական՝ սիրեցին իրար և ընտանիք կազմեցին, ունեցան երեք երեխա, որոնց մեծացրին վաղվա հույսերով ու երազանքներով։ Պետրոսի ձեռքերը դողում են նամակը բացելիս, դեմքին անհանգստության նշաններ են երևում, բայց երևում է՝ տող առ տող խաղաղվում է հոգին, ուրեմն՝ լավ բաների մասին է կարդում։ «Մենք քիչ չապրեցինք իրար հետ,- գրում էր կինը,- շուրջ 22 տարի։ Ապրեցինք սիրով, օգնելով իրար։ Մեծ փորձություններ չկրեցինք, որովհետև խաղաղ ժամանակներ էին։ Եվ ահա այս փորձությունը՝ պատերազմը։ Դու միշտ անհանգստանում ես, թե ինչպես մենք կդիմանանք դժվարություններին։ Դու, սիրելիս, ճանաչում ես քո ընկերուհուն, պետք է իմանաս, որ ես պատրաստ եմ ամեն ինչի։ Առայժմ կյանքը մեծ դժվարություններ չունի, իսկ եթե գան ծանր օրեր, ապա ես պատրաստ եմ դիմադրելու, որովհետև գիտեմ, թե ինչու է դա այդպես...»։



Քոչարը գրում է. «Կարդում է զինվորական տեխնիկն իր կնոջ նամակը, և հպարտության զգացումները ողողում են նրա սիրտը: Բայց, այնուամենայնիվ, անհանգստանում է նա. Դժվար չէ՞ ապրել առանց իրեն»: Կինը կարծես կռահել է ամուսնու այդ հարցը և գրում է. «...տնտեսության մասի՞ն ես հարցնում, ամեն ինչ լավ է, վառելափայտ չունեինք, գնացի առաջին սովխոզը, խնդրեցի փայտ բաց թողնեն ինձ: Նրանք շատ ուրախացան, ընդունեցին ինձ բարեկամաբար, հարցրին քո մասին, փայտ դուրս գրեցին ու պատվիրեցին երբեք անհարմար չզգալ, չքաշվել, որևէ կարիքի ու պահանջի դեպքում դիմել իրենց: Դուրս գրեցին նաև կարտոֆիլ, միքիչդոշաբ...»:

Պետրոս Պետրոսյանն արդեն բանակում էր, երբ լուր առավ, որ բանակ է մեկն ելնա եւ ավագ որդին՝ Սաշան: Այդ ե՞րբ մեծացավ, որ հիմա էլ զենք է վերցրել, կովում է: Մայրը նամակ էր ստացել որդուց եւ դրել ամուսնուն ուղարկած նամակի մեջ: Պետք էր տեսնել, թե հայրն ինչ զգացումներով էր բացում որդու նամակը, ինչ ապրումների մեջ էր: «Մամա, կարող ես պարծենալ, որ մեր ընտանիքից երկուսը՝ քո ամուսինն ու քո մեծ տղան, կովի դաշտում են: Հայտնի ինձ հայրիկի հասցեն, կոչումը, պաշտոնը եւ միշտ տեղյակ պահիր ինձ նրա մասին...»:

Այդ պահին ինչ չէր տա Պետրոսը, որ որդին կողքին լիներ, գրկեր, համբուրեր նրան, բայց ուրիշ են պատերազմի ճամփաները, միշտ չէ, որ հանդիպման են տանում, եւ հոր աչքերն արցունքով լցվեցին: Դա կարոտի եւ հպարտության արցունք էր...

Դեռ տանը, խաղաղ օրերին, Պետրոս ընկատել էր որդու եւ Դոնարա անունով նրա ընկերուհու մտերմությունը: Նա իրենց տուն էր գալիս ընկերների ու ընկերուհիների հետ, համեստ, ամոթխած աղջիկ էր: Քոչարը գրում է. «Պատանիները կարծում էին, թեծնողները ոչինչ չգիտեն ու չեն էլ իմանա՝ միաստորեն չհասկանալով, որ կյանքում փորձված մարդու առաջին հայացքը տեսնում է պատանին երիսերը նրանցաչքերիմեջ, դեմքի վրա ուշարժումներում: Եվ երբ տեսավ ու հասկացավ հայրը՝ աղջիկը միանգամից դարձավ նրան հարազատ»:

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նյութի աղբյուր՝ http://nakhshkaryan.blogspot.com/2013/02/blog-post_4927.html

Տնային առաջադրանքների համար սովորողները նյութեր կարող են գտնել «Հայկական Սովետական Հանրագիտարանում», հ. 13, Երևան, 1987 ու «Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հանրագիտարանում», Երևան, 2012: